

ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հարությունյան Տ.Վ., Սարգսյան Լ.Ն., Գևորգյան Ա.Վ.*

Ամփոփում: Ներդրումների ներգրավման տեսությունները մեկնաբանում են երևույթը այն ժամանակահատվածի համար, որում ստեղծվել են: Այնուամենայնիվ դրանք չեն կարող անվերապա մեկնաբանել մերօրյա իրականությունը, քանզի ցանկացած տեսություն մշակվել է՝ հիմքում ունենալով բազմաթիվ կանխավարկածներ, ինչպես նաև «այլ հավասար պայմանների» սկզբունքը: Իսկ մերօրյա իրականության մեջ փոփոխվել են այդ տեսությունների հիմքում ընկած կանխավարկածները: Բնականաբար սա չի նշանակում, որ տվյալ տեսություններում առաջ քաշված թեզերն առհասարակ տեղի չունեն մերօրյա իրականության մեջ: Դրանց գերակշիռ մասն իրական է նաև արդի ժամանակահատվածում, սակայն որպեսզի պատկերացնենք՝ ներկայում ինչ գործոններ են ազդում ներդրումների ներգրավման և ներդրումային միջավայրի ձևավորման վրա, անհրաժեշտ է դիտարկել բազմագործոն համակարգ: Հոդվածի նպատակն է ներկայացնել այն հիմնական գործոնները, որոնք ազդում են ներդրումների ներգրավման վրա:

Բանալի բառեր. ներդրումների ներգրավում, ՕՈՒՆ, ինստիտուցիոնալ գործոններ, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական գործոններ, տնտեսական ազատություն, ազատ առևտուր

JEL. Classification: E02, F13, F19, P45,

1. Ներածություն

Մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ են վերլուծությունները, որոնք նպատակ ունեն պարզելու այս կամ այն գործոնի ազդեցությունը երկրի ներդրումային միջավայրի, ներդրումային իմիջի և ներդրումների ներգրավման վրա: Վերլուծությունների համակողմանի ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացության,

* Տ.Վ.Հարությունյան, ԵՊՀ ՏԿՖ դասախոս, տ.գ.դ., +374-010-581971
Լ.Ն.Սարգսյան, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան ՏԻ փոխտնօրեն, տ.գ.թ., +374-010-581971
sarg.lilit@yahoo.com
Ա.Վ.Գևորգյան, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
հայրեր, +374-010-581971, +37455834101, mrsarminegevorgyan1987@gmail.com

որ հիմնական գործոնները, որոնց ազդեցությունը ներդրումային միջավայրի վրա ուսումնասիրվել է, կարող ենք ներկայացնել հետևյալ խմբերով՝ ինստիտուցիոնալ, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական գործոններ:

Հելեն Բարնարդն ու Ջոն Լուիզը[7] պնդում են, որ տնական ժամանակ բավական բարդ է եղել պարզաբանել այն հարցը, թե ինչն է ստիպում ներդրողներին իրենց տնօրինության տակ եղած միջոցները տեղափոխելու և ներդնելու հայրենի երկրից դուրս: Այդուհանդերձ, հեղինակները, ուսումնասիրելով բազմաթիվ հետազոտողների կողմից առաջ քաշված թեզերը և համադրելով դրանք սեփական մոտեցումների հետ, պնդում են, որ որպես կանոն ներդրողները փախչում են այն երկրներից, որոնցում գործող ինստիտուցիոնալ միջավայրն իրենց համար անկայուն է, և նրանք դժվարանում են կանխատեսել այս տեսանկյունից սպասվող փոփոխությունները: Նրանք առանձնացնում են ներդրողների սպասումների և ինստիտուցիոնալ զարգացումների անհամապատասխանության 3 փուլ, որոնք առկա են եղել տարբեր երկրներում՝ սթրես, լարվածություն և վերջնական ձախողում: Հեղինակները երևույթը մեկնաբանում են այն տեսանկյունից, որ ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը ներդրողների համար գրեթե անկանխատեսելի է դարձնում «խաղի կանոնները», և նրանք ի վիճակի չեն լինում նման անկայունության պայմաններում մշակել և իրականացնել ձեռնարկության զարգացման ճիշտ ռազմավարություն, ուստիս վաղ թե ուշ ստիպված են լինում լքել տվյալ երկրի տարածքը՝ ավելի կայուն ինստիտուցիոնալ միջավայրի փնտրտուքով:

2. Վերլուծություն

Քրիստինա Սակալին[12] Բուլղարիայի օրինակով ցույց է տալիս, որ տվյալ երկրում ներդրումների ներգրավումը մեծապես պայմանավորված է ինչպես շուկայի խաղի կանոններով, այնպես էլ արդյունավետ իրականացվող բարեփոխումներով, ինչպիսիք են աշխատուժի որակի բարելավմանն ուղղված պետական միջոցառումները, պետական ինստիտուտներում տեղի ունեցող բարեփոխումների ալիքը, ԵՄ ինտեգրման գործընթացը և այլն: Հեղինակը Բուլղարիայի վիճակագրական տվյալների հիման վրա ստուգում է իր կողմից նախապես առաջ քաշված հիպոթեզների իսկությունը: Իր հետազոտության շրջանակներում հեղինակը, ի թիվս ՕՌԻՆ ներգրավման վրա ազդող մինչ այդ հայտնի գործոնների, ինչպիսիք են ՀՆԱ-ի աճը, առևտրի ազատականացումը և այլն, բացահայտել է նոր գործոններ, որոնք ևս էական ազդեցություն

են ունեցել Բուլղարիայի ՕՈԻՆ ներգրավման վրա: Ըստ հեղինակի՝ այդ նոր գործոններն են կրթական մակարդակը, ինստիտուտների գործունեության արդյունավետության ցուցանիշները: Ընդ որում հեղինակը պնդում է, որ Բուլղարիայի համար դիտարկվող ժամանակահատվածում այս նոր գործոններն էլ ավելի մեծ ազդեցություն են ունեցել ներդրումների ներգրավման հարցում, քան օրինակ՝ միավոր աշխատուժի վրա կատարվող ծախսը: Այսպիսով, հեղինակը եզրահանգում է, որ ներդրումների ներգրավում ապահովելու համար միայն ավանդական փոփոխականներն այլևս բավարար չեն, և երկրի կառավարությունը պետք է տնտեսական աճին, մրցունակության բարձրացմանը զուգահեռ շարունակի բարելավել երկրում առկա աշխատուժի կրթական մակարդակը և զարգացնել ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը՝ մեծացնելով արդյունավետ գործող ինստիտուտների թիվը:

Ալան Բևանը, Սոլ Էստրինը և Կլաուս Մեյերը[8] իրենց աշխատությանը փաստում են, որ ինստիտուտները մեծ դեր են խաղում ներդրումների ներգրավման գործում: Այդուհանդերձ հեղինակները գտնում են, որ բազմաթիվ են վերլուծությունները, որոնք փաստում են ինստիտուտների կարևորությունը, սակայն շատ քիչ է ուսումնասիրված այն հարցը, թե հատկապես որ ինստիտուտներն են առավել կարևոր ՕՈԻՆ ներհոսքի տեսանկյունից: Հեղինակները փորձել են այս հարցի պատասխանը տալ՝ Արևելյան Եվրոպայի անցումային տնտեսությամբ երկրների փորձն ուսումնասիրելով: Առկա տվյալների հիման վրա նրանք փաստում են, որ արձանագրել են դրական կապ ինստիտուտների և ներդրումների ներհոսքի միջև այն պարագայում, երբ խոսքը ձևավորված ինստիտուտների մասին է, ավելին՝ Ռուսաստանի օրինակով նրանք նկատել են, որ չձևավորված ինստիտուտները բացասաբար են ազդում ՕՈԻՆ ներհոսքի վրա: Ինստիտուցիոնալ տեսանկյունից, ըստ հեղինակների գնահատման, ներդրումների վրա դրական ազդեցությունը հատկապես նկատելի է մասնավոր սեփականության պաշտպանվածության, բանկային հատվածի բարեփոխումների, առևտրի ազատականացման և օրենսդրաիրավական համակարգի կայունության պարագայում: Ընդ որում նրանք ներդրումների ներհոսքի վրա դրական ազդեցություն չեն արձանագրել ներքին գների ազատականացման, ոչ բանկային ֆինանսական հատվածի զարգացման և մրցակցային քաղաքականության պարագայում:

Մաքսիմ Դելաբարը[11] սեփական հետազոտությունն է իրականացրել՝ ներդրումների վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցությունը

բացահայտելու համար: Հեղինակի նպատակն է բացահայտել, թե ներդրումների ներգրավման վրա ինչ գործոններ են ազդում աշխարհի տարբեր երկրներում 2000թ.-ից հետո: Դեկաբարը դրական կապ է արձանագրել սեփականության իրավունքի պաշտպանության և ՕՈՒՆ ներհոսքի միջև:

Դեկաբարը ինստիտուցիոնալ գործոններին զուգահեռ քննարկել է նաև տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական գործոնների ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա: Հեղինակը, սակայն, չի կարողանում նշանակալի կապ արձանագրել տնտեսության բացվածության, գնաճի, բնակչության աճի, արժույթային փոխարժեքի և ներդրումների ներհոսքի միջև: Ավելին, հեղինակը նկատել է, որ այն երկրներում, որոնցում ավելացվում է ներմուծման մաքսատուրքը, որոշակի ժամանակ անց ավելանում են օտարերկրյա ներդրումները:

Բոննի Բուխանանը, Քուան Լին և Մինակշի Լիշին[10] վերլուծել են 1996-2006թթ. 164 երկրների պանելային տվյալներ և պնդում են, որ արդյունավետ գործող ինստիտուտները նպաստում են ՕՈՒՆ ներհոսքին, իսկ նրանց ազդեցությունը ՕՈՒՆ ներգրավման վրա բավական նշանակալի է: Հեղինակները բացահայտել են, որ դիտարկվող ժամանակահատվածում ընտրված երկրների ինստիտուցիոնալ գործունեության որակի 1 միավոր աճը նպաստում է ՕՈՒՆ ներհոսքին 1,69 միավորով:

Ներդրումների ներգրավման վրա ինստիտուցիոնալ գործոնի ազդեցությունը դիտարկել են նաև Դարոն Աճեմօղլուն և այլք[6]: Նրանք հստակ մեկնաբանում են, որ կայացած քաղաքական ինստիտուտները միայն կարող են երաշխիք հանդիսանալ արդյունավետ գործող տնտեսական ինստիտուտների զարգացման համար, ինչն էլ ներդրումների ներհոսքի առաջին նախապայմաններից է:

Հետազոտողների մեկ այլ խումբ[9] ուսումնասիրել է 1989-2016թթ. Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Սլովակիայի վիճակագրական տվյալների դինամիկան և էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում դուրս է բերել մի շարք տնտեսական ցուցանիշների ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա: Արդյունքում հեղինակները ցույց են տվել, որ աշխատավարձի մակարդակը և աշխատուժի մեջ կրթական բարձր ցենզ ունեցող աշխատողների մեծ տեսակարար կշիռը ՕՈՒՆ ներգրավման վրա ամենամեծ դրական ազդեցություն ունեցող գործոններն են: Հեղինակները ցույց են տվել նաև ՕՈՒՆ ներգրավման վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնները: Դրանք են՝

եկամտահարկի ավելացում, առևտրի բացվածության աստիճանի մեծացում և գիտական հետազոտությունների վրա կատարվող ծախսերի ավելացում: Հեղինակները, սակայն, չեն կարողացել նշանակալի կապ հայտնաբերել գնաճի, գործազրկության, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նորարարությունների և ՕՈՒՆ ներգրավման միջև:

Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի ասպիրանտ Դենիս Մուխան [3] ցույց է տվել այն հիմնական ցուցանիշները, որոնք ազդում են ներդրումների ներգրավման վրա՝ ուսումնասիրելով UNCTAD-ի կողմից կատարված վերլուծությունը և ևս 22 այլ աշխատանքներ: Մուխան իրականացրել է նաև ներդրումների ներգրավման վրա ազդող գործոնների բացահայտմանն ուղղված սեփական հետազոտությունը՝ հիմնվելով 144 երկրների՝ 2005-2012թթ. 20 տվյալների վրա, որոնցից 10-ը ինստիտուցիոնալ ցուցանիշներ են, իսկ 10-ը՝ տնտեսական: Վերլուծության արդյունքում Մուխան [3] պարզել է, որ ՕՈՒՆ ներհոսքի վրա դրական են ազդում հետևյալ գործոնները՝ ՀՆԱ-ն, արտաքին առևտրի հարաբերակցությունը ՀՆԱ-ին, ենթակառուցվածքների առկայությունը, քվեարկության իրավունքը, պետական կառավարման արդյունավետությունը, պետական վերահսկողության որակը: Իսկ բացասական ազդեցությամբ բնորոշվում են հետևյալ գործոնները՝ բնական ռեսուրսների առկայությունը և քաղաքական վերափոխումների ինդեքսը: Մյուս գործոնների ազդեցությունը նշանակալի չի եղել, ուստի դրանց դրական կամ բացասական ազդեցության մասին ոչինչ հնարավոր չէ ասել:

Մասնագետների մեկ այլ խումբ [2], ամփոփելով ավելի քան 30 հեղինակների աշխատություններ, ներկայացրել է ներդրումների ներգրավման վրա ազդող փոփոխականների համախումբ, որը կրկին կարող ենք խմբավորել, համաձայն մեր կողմից նախապես առաջ քաշված համախմբման, հետևյալ կերպ՝

- ինստիտուցիոնալ գործոններ՝ տնտեսական ազատության ինդեքս, պետության թուլության ինդեքս,
- տնտեսական գործոններ՝ ՀՆԱ-ի աճ, ՀՆԱ-ի դեֆլյատոր, տնտեսության բացվածության աստիճան, բարձր տեխնոլոգիատար արտահանման տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ, գործազրկության մակարդակ,
- սոցիալ-դեմոգրաֆիական գործոններ՝ համացանցի օգտատերերի քանակ (% 100 մարդու հաշվով), բարձրագույն կրթությամբ բնակչության տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության կազմում:

Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա պանելային վերլուծության

արդյունքում հեղինակները հանգել են այն եզրակացության, որ տնտեսական ազատության ինդեքսի աճը դրական է ազդում ՕՌԻՆ-ի ներհոսքի վրա զարգացող երկրներում, պետության թուլության ինդեքսը բնութագրվում է հակադարձ կապով: Այսպիսով, ըստ հեղինակների որքան զարգացած է ինստիտուցիոնալ միջավայրը, այնքան շատ ներդրումների ներհոսք տեղի կունենա դեպի տվյալ երկիր: Այդուհանդերձ տնտեսական ազատության ինդեքսի գործակիցը վիճակագրորեն նշանակալի է ստացվել միայն բարձր եկամուտ ունեցող, իսկ պետության թուլության ինդեքսը՝ բարձր և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում: Այսպիսով, հեղինակները եզրահանգում են, որ ինստիտուցիոնալ գործոնները ներդրումների վրա առավելապես ազդում են այն երկրներում, որոնք հասել են զարգացման որոշակի մակարդակի, կամ այլ կերպ ասած՝ Համաշխարհային բանկի դասակարգմամբ գտնվում են միջինից բարձր և բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում, ինչպիսին է օրինակ Հայաստանի Հանրապետությունը:

Համաձայն հեղինակների կողմից կատարված վերլուծության՝ տնտեսական ցուցանիշներից ներդրումների ներգրավման վրա դրական են ազդում ՀՆԱ-ի աճը, ՀՆԱ-ի դեֆյաստորը, մյուս գործոնների ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի չի եղել, իսկ սոցիալ-դեմոգրաֆիական գործոններից գործազրկության աճը բացասաբար է ազդում ներդրումների ներհոսքի վրա, մյուս գործոնների ազդեցությունը կրկին ոչ նշանակալի է:

Մեկ այլ հետազոտության մեջ [4] հեղինակներն ամփոփել են 9 վերլուծությունների արդյունքներ և ներկայացրել ներդրումների վրա ազդող հետևյալ գործոնները, որոնք մեր կողմից խմբավորված կներկայացնենք՝ ըստ նախնական գործոնների խմբերի՝

- ինստիտուցիոնալ գործոններ՝ կոռուպցիայի մակարդակ (ազդեցությունը՝ բացասական), իրավական թափանցիկության մակարդակ (ազդեցությունը՝ բացասական), ճանապարհների առկայություն (ազդեցությունը՝ դրական), բջջային կապի հասանելիության մակարդակ (ազդեցությունը՝ դրական),
- տնտեսական գործոններ՝ տնտեսության բացվածություն (ազդեցությունը՝ դրական), ՀՆԱ-ի աճ (ազդեցությունը՝ դրական), աշխատավարձի մեծություն (ազդեցությունը՝ բացասական), գնաճ (ազդեցությունը՝ դրական), շուկայի չափ (ազդեցությունը՝ դրական), այլ տնտեսական ծախսեր (օրինակ՝ արտահանման և ներմուծման հետ կապված ծախսեր),
- սոցիալ-ժողովրդագրական գործոններ՝ կրթական մակարդակ (ազդեցությունը՝ դրական), մարդկային զարգացման ինդեքս (ազդեցությունը՝

դրական):

Ուսումնասիրելով Կոնստանտին Պոգոնյակովի[5] վերլուծությունը ՌԴ առանձին մարզերի համար՝ կարող ենք նրա կողմից առաջ քաշված ցուցանիշներն ընդհանրացնել ամբողջ երկրի համար հետևյալ տրամաբանությամբ. մարզի 1 շնչին բաժին ընկնող արտադրանքի ծավալը երկրի համար կնույնականացվի 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հետ և այլն: Այս տրամաբանությամբ կարող ենք նշել, որ հեղինակը ներդրումների ներգրավման համար կարևորում է հետևյալ գործոնների ազդեցությունը.

- ինստիտուցիոնալ գործոններ՝ ճանապարհային ենթակառուցվածքի առկայությունը, հանցավորության մակարդակը, շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակը, քաղաքական կայունության մակարդակը,
- տնտեսական գործոններ՝ ՀՆԱ, ՀՆԱ-ի աճ, ՓՄՁ-ում զբաղվածների թվաքանակ, վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, մեկ շնչին բաժին հասնող մանրածախ առևտրի ծավալը, 1 շնչի հաշվով արտահանման ծավալը, առկա ռեսուրսների քանակը, գործազրկության մակարդակը,
- սոցիալ-ժողովրդագրական գործոններ՝ 1 շնչի հաշվով բնակարանների թիվը, 1000 մարդու հաշվով մարդատար ավտոմեքենաների քանակը, 1000 ընտանիքի հաշվով բջջային հեռախոսների քանակը, բնակչության կենսամակարդակը, աղքատության մակարդակը, գործադուլների առկայությունը:

Նշենք նաև, որ հայ հեղինակները ևս անդրադարձել են այս խնդրին: Մասնավորապես Լ.Սարգսյանը, Դ.Գրիգորյանը և Ս.Սարգսյանն ուսումնասիրել են ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող թվով 50 գործոններ[1]: Այդուհանդերձ մեր կողմից կիրառվող մեթոդաբանությունը կտարբերվի այս հետազոտողների մեթոդաբանությունից, քանի որ մենք կդիտարկենք միայն այն գործոնների ազդեցությունը, որոնք հիմնավորված դրական կամ բացասական են ազդում մեր կողմից մինչ այս քննարկված բոլոր հեղինակների աշխատություններում, և չենք անդրադառնա այն գործոններին, որոնց ազդեցությունը հեղինակների մի մասի մոտ դրական է, մյուս մասի մոտ՝ բացասական կամ անորոշ:

3. Եզրակացություն

Այսպիսով, մեր կողմից կատարված վերլուծության հիման վրա որպես ներդրումների ներգրավման վրա ամենաազատ ազդող գործոններ առանձնացվել է 40 գործոնից բաղկացած հետևյալ համախումբը.

ինստիտուցիոնալ 20 գործոններ՝ քաղաքական կայունության մակարդակ, պետական կառավարման արդյունավետություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, դատարանների անաչառություն, կոռուպցիայի ազատության ինդեքս, տնտեսական ազատության ինդեքս, գործարարության իրականացման համաթիվ (որպես ցուցանիշներ կոդիտարկվեն հետևյալները՝ բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործարքների քանակը, շինարարության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործարքների քանակը, աշխատանքի ընդունում, սեփականության գրանցման համար անհրաժեշտ գործարքների քանակը, վարկ ստանալու դիրքը, փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության դիրքը, վճարվող հարկերի դիրքը, արտաքին առևտրի դիրքը, պայմանագրերի կիրարկում, բիզնեսի փակում), ներդրումային ռիսկերի առկայությունը (որպես ցուցանիշներ կոդիտարկվեն հետևյալները՝ ներդրումների ազատության ինդեքս, բիզնեսի ազատության ինդեքս, ֆինանսական ազատության ինդեքս, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքս):

Տնտեսական 15 գործոններ՝ ՀՆԱ-ի աճ, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ, արտահանման ծավալ, առկա ֆինանսական ռեսուրսներ (որպես ցուցանիշ կոդիտարկվի վարկի տոկոսադրույքը), գործազրկության մակարդակ, տնտեսության բացվածություն, աշխատավարձի մեծություն, գնաճ, շուկայի չափ (որպես ցուցանիշ կոդիտարկվի բնակչության թվաքանակը), այլ տնտեսական ծախսեր (որպես ցուցանիշներ կոդիտարկվեն արտահանման առնչվող մաքսային և այլ ծախսերը, արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը, ներմուծման առնչվող մաքսային և այլ ծախսերը, ներմուծման փաստաթղթավորման հետ կապված ծախսը), բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակ:

Սոցիալ-ժողովրդագրական 5 գործոններ՝ բնակչության աճը, աղքատության մակարդակը, բարձրագույն կրթությամբ աշխատուժի տեսակարար կշիռը ընդհանուր աշխատուժի մեջ, համացանցի օգտատերերի քանակը (% 100 մարդու հաշվով), մարդկային զարգացման ինդեքսը:

Այսպիսով, մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա՝ մենք ներկայացրինք այն գործոնները, որոնք հիմնականում ազդում են ներդրումների ներգրավման վրա, որոնց հիման վրա էլ կարելի է վերլուծել ՀՀ ներդրումային միջավայրի արդի վիճակը:

Գրականություն

1. Սարգսյան Լ. և ուրիշներ, Հայաստանի ներդրումները մարտահրավերներ և հնարավորություններ /, -Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020, էջ 87-154, <https://economics.sci.am/wp-content/uploads/2021/03/Girq-2020-Lilit-Sargsyan-11-25-.pdf>
2. Drapkin I. M., Mariev O. S., Galenkova A. D. Institucional'nye faktory aktivizacii privilechenija prjamyh inostrannyh investicij v jekonomiku razvivajushhihsja stran // Jekonomika regiona. — 2019. — T. 15, vyp. 3. — S. 952-966, doi 10.17059/2019-3-24]
3. Denis Mukha, The influence of economic and institutional factors on attracting foreign direct in-vestment, Bank Vetnik, 2014, pp. 40-50, <https://www.nbrb.by/bv/articles/9949.pdf> [Muha Den-is, Vlijanie jekonomicheskikh i institucional'nyh faktorov na privilechenie prjamyh inostrannyh investicij, Bankovskij vetnik, 2014, str. 40-50]
4. О.В. Баженов и др., Эконометрический анализ факторов привлечения прямых иностранных инвестиций в развивающиеся страны / Экономический анализ: теория и практика, 2017, т. 16, вып. 1, стр. 188–200
5. Pozdnjakov Konstantin, Teoreticheskie osnovy mehanizma privilechenija inostrannyh investicij v re-giony RF i obosnovanie ih prakticheskoj primenimosti, «Lulu press», Severnaja Karolina, SShA, 2005, str. 93-98
6. Acemoglu, Daron, Simon Johnson, and S Robinson (2005). “Institutions as the Fundamental Cause of Long-Run Growth, Handbook of Economic Growth, Ch.6, <https://economics.mit.edu/files/4469>
7. Barnard H., Luiz J.M. Escape FDI and the dynamics of a cumulative process of institutional misalignment and contestation: Stress, strain and failure // Journal of World Business. — 2018. — №53. — P. 605–619
8. Bevan Alan, Estrin Saul, Meyer Klaus, Foreign investment location and institutional development in transition economies, International Business Review, Volume 13, Issue 1, February 2004, p.43-64, <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0969593103001082>
9. Bobenič Hintošová, A., Bruothová, M., Kubiková, Z., & Ručinský R. (2018). Determinants of foreign direct investment inflows: A case of the Visegrad countries. Journal of International Studies, 11(2), p.222-235. doi:10.14254/2071-8330.2018/11-2/15, https://www.jois.eu/files/15_500_Bobenic%20Hintosova%20et%20al.pdf
10. Buchanan, Bonnie G. & Le, Quan V. & Rishi, Meenakshi, 2012. "Foreign direct investment and institutional quality: Some empirical evidence," International Review of Financial Analysis, Elsevier, vol. 21(C), pages 81-89, DOI: 10.1016/j.irfa.2011.10.001, <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S1057521911000871>

11. Delabarre Maxime, The Economic and Institutional Determinants of Foreign Direct Investments. 2021, p. 1-37, <https://hal.archives-ouvertes.fr/hal-03334549/document>
12. Sakali Christina, DETERMINANTS OF FOREIGN DIRECT INVESTMENT (FDI) IN BULGARIA: An econometric analysis using panel data, Journal of Economics and Business Vol. XVI – 2013, No 1, p.73-97, <https://www.u-picardie.fr/eastwest/fichiers/art168.pdf>

Ընդունված է 8.11.2021
Գրախոսված է 25.11.2021

ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА ПРИВЛЕЧЕНИЕ ИНВЕСТИЦИЙ

Арутюнян Т.В., Саргсян Л.Н., Геворгян А.В.

Аннотация. Теории инвестиционной привлекательности интерпретируют феномен для периода, в который они были созданы. Однако они не могут однозначно интерпретировать сегодняшнюю реальность, поскольку любая теория была разработана на основе многих предпосылок, таких как принцип «прочих равных условий». И в сегодняшней реальности предположения, лежащие в основе этих теорий, изменились. Естественно, это не означает, что тезисы этих теорий вообще не имеют места в наши дни. Большинство из них реальны в современный период, но для того, чтобы представить, какие факторы в настоящее время влияют на привлечение инвестиций и формирование инвестиционной среды, необходимо рассмотреть многофакторную систему. Цель данной статьи - представить основные факторы, влияющие на привлечение инвестиций.

Ключевые слова: привлечение инвестиций, ПИИ, институциональные факторы, экономические и социально-демографические факторы, экономическая свобода, открытость торговли.

FACTORS INFLUENCING ATTRACTING INVESTMENTS

Harutyunyan T. V., Sargsyan L.N., Gevorgyan A. V.

Annotation: Investment attraction theories interpret the phenomenon for the period in which they were created. However, they cannot unequivocally interpret today's reality, as any theory has been developed on the basis of many presuppositions, such as the principle of "other equal conditions." And in today's reality, the assumptions underlying these theories have changed. Naturally, this does not mean that the theses put forward in these theories do not take place in the modern reality at all. Most of them are real in the modern period, but in order to understand what factors currently affect the attraction of investments and the formation of the investment environment, it is necessary to consider a multifactorial system. The purpose of this article is to present the main factors that affect the attraction of investments.

Keywords: Attracting investments, FDI, institutional factors, economic and social-demographic factors, economic freedom, trade openness.